ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի օգոստոսի 14-ին կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 պայմանագրում 2019 թվականի նոյեմբերի 28-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1617-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	2019թ. համար լրացուցիչ ֆինանսական միջոցի տրամադրում և առաջանցիկ շինարարական աշխատանքների իրականացում:
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և Պայմանագրի 5.1.1, 5.1.2, 8.4 և 8.5 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 7

14.08.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 գնման պայմանագրի

ք. Երևան <<28>> 11 2019թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ. Մնացականյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 14.11.2019թ. N 1617-Ն որոշումը, ինչպես նաև ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 14.08.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.1.1, 5.1.2, 8.4 և 8.5 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

ա) 2019թ. համար նախատեսել լրացուցիչ **712 518 200 (յոթ հարյուր տասներկու միլիոն հինգ հարյուր տասնութ հազար երկու հարյուր)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

բ) Պայմանագրի գնից մինչև **712 518 200 (յոթ հարյուր տասներկու միլիոն հինգ հարյուր տասնութ հազար երկու հարյուր)** ՀՀ դրամը համապատասխան բանկային երաշխիքի առկայության դեպքում Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:

գ) Հաստատել 2019թ. հատկացված **712 518 200 (յոթ հարյուր տասներկու միլիոն հինգ հարյուր տասնութ հազար երկու հարյուր)** ՀՀ դրամի շրջանակներում կատարման ենթակա աշխատանքների օրացուցային գրաֆիկը և վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածներ N1-ի և N2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N1-ը բաղկացած 1 (մեկ) էջից և հավելված N2-ը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012599 ՀՎՀՀ 02565827	<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ ք. Գավառ, Անդրանիկի 5 ՝՝Արմսվիսբանկ՝՝ ՓԲԸ Հ/Հ 2500010066920100 ՀՎՀՀ 08404037
Գլխավոր քարտուղար՝ _____ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝ _____ Հ. Մնացականյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N1
14.08.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 պայմանագրի
<< 28 >> 11 2019թ. կնքված N 7 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքներ

ըստ աշխատանքների ծավալների

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը (աճողական՝ արտահայտված ՀՀ դրամով)	Աշխատանքների կատարման ժամկետը մինչև
1	60 000 000	20.12.2019թ. ներառյալ
2	170 000 000	30.03.2020թ ներառյալ
3	368 000 000	30.06.2020թ ներառյալ
4	558 518 200	30.09.2020թ ներառյալ
5	712 518 200	20.11.2020թ ներառյալ

ըստ առանձին աշխատանքների տեսակների

N ը/կ	Կատարվելիք աշխատանքների անվանումը	Կատարված աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը
1	Համաշինարարական աշխատանքներ, էլեկտրատեխնիկական մաս, սարքավորումների մոնտաժման աշխատանքներ, արտաքին հաղորդակցուղիներ	20.12.2019թ.
2	Թիվ 1 ուսումնական մասնաշենքի ուժեղացում, համաշինարարական աշխատանքներ, ներքին ինժեներական ցանցեր	30.03.2020թ
3	Համաշինարական աշխատանքներ, տանիք, ներքին և արտաքին հարդարում, ինժեներական ցանցեր և սարքավորումներ	30.06.2020թ
4	Համաշինարական աշխատանքներ, ներքին և արտաքին հարդարում, ինժեներական ցանցեր, սարքավորումներ և բարեկարգում	30.09.2020թ
5	Համաշինարական աշխատանքներ, ներքին և արտաքին հարդարում, ինժեներական ցանցեր, սարքավորումներ և բարեկարգում	20.11.2020թ

*** Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությունը նախապես անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012599
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝
_____ Ա. Մնացականյան
(ստորագրություն)
L.S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Գավառ, Անդրանիկի 5
<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 25000100669201 00
ՀՎՀՀ 08404037
Տնօրեն՝
_____ Հ. Մնացականյան
(ստորագրություն)
L.S.

Հավելված N2
14.08.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 պայմանագրի
<<28>> 11 2019թ. կնքված N 7 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 03)

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	712 518 200	**712 518 200**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012599
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Գավառ, Անդրանիկի 5
<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2500010066920100
ՀՎՀՀ 08404037

Տնօրեն՝

_____ Հ. Մնացականյան
(ստորագրություն)

Կ.Տ.